ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԲԸ ՄԻՋԵՎ 27.02.2020**թ. ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ**-2020/12-5 **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի մի կողմից, և «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Սուսան Պետրոսյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 27.02.2020թ. կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2020/12-5 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.2 կետը կնքեցին սույնհամաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելվածներ 2-ում և 4-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելված 2-ի աղյուսակի «2020 թվականի պայմանագրային գումար» սյունակի, Հավելված 4-ի «ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» և «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակների «Ընդամենը՝ տարի» սյունակների «18,267.5» թվի փոխարեն սահմանել «28,653.8» թիվը, իսկ Հավելված 4-ի աղյուսակների «դեկտեմբեր» սյունակների «2,029.4» թիվը փոխարինել «12,415.7» թվով:

2. Սույն Համաձայնագիրն՝

1) ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2)գործողության ժամկետով տարածվում է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած ժամանակահատվածի վրա և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Պատվիրատու՝ առողջապահության նախարարություն	Կատարող՝ «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Հասցե՝ Երևան, Կառավարականտուն 3	Հասցե՝ ք.Գյումրի, Կույբիշևի 3
Սպասարկողբանկ՝ ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Հայէկոնոմնբանկ» ԲԲԸ
Բանկայինհաշիվ՝ 900011105088	Բանկայինհաշիվ՝ 163128117450
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 05502681
Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան KOCHARYAN LUSINE 6509770407 Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407 DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM Дата: 2020.12.07 18:23:16 +04'00' ---------- (ստորագրություն)	«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սուսան Պետրոսյան PETROSYAN SUSAN 7411620106 Подписано цифровой подписью: PETROSYAN SUSAN 7411620106 Дата: 2020.12.07 10:43:18 +04'00' ---------- (ստորագրություն)
Հեռ. 060808003 E-mail: info@moh.am	Հեռ. 0312-59315 E-mail: gyumribloodbank@mail.ru